ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

« 09 » դեկտեմբերի 2024թ. N ՄՊ/572-Ա

ք. Արմավիր

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի N ԴԽ/15.2/39333-2024 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

Որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/՝ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային

գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/՝ սույն որոշամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2025թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-12-09 15:52:08 GMT+4
Հավաստվում է էլեկտրոնային կողմից
eID

Մարզպետ՝ **Ա.Մեխակյան**

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024թվականի դեկտեմբերի 09-ի
N 172-Ա որոշման

Աշխատանքային խմբի կազմ

Խմբի ղեկավար՝ Ա.Այվազյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Անդամներ՝

Զ.Սարդարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Կ. Մարգարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 09.12.2024 14:23:21 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023